ԿԱՐԾԻՔ

ՍԻՄՈՆ ՍՆԳՐՅԱՆԻ «ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը:

ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն զարգացման գործընթացների ուսումնասիրությունը համաշխարհային տնտեսության ընդհանուր տեմպերի դանդաղման, արտադրության տեմպերի նվազման, շուկայի որոշ հատվածներում անբարենպաստ իրավիճակի և էներգակիրների գների անկայունության պայմաններում հրատապ խնդիր է թվում: ԵԱՏՄ անդամ երկրների ինտեգրման հիմքը ապրանքների և ծառայությունների ընդհանուր շուկաների ձևավորումն է, որի զարգացման աստիճանը մեծապես որոշում է նրանց փոխգործակցության հետագա խորացման և ընդլայնման ռազմավարական ուղղությունը, ազգային մրցունակության բարձրացումը, ինչպես նաև հաջողությունը:

Կարճ ժամանակահատվածում ԵԱՏՄ-ն ինտեգրացիոն նախագծի շրջանակներում մեծ աշխատանք է կատարել և զգալի արդյունքների հասել: Միության փոխադարձ համագործակցության հիմնական նպատակը ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձևավորումն է: Ինտեգրման շրջանակներում հիմնականում գործում և ձևավորվում են ընդհանուր շուկաներ, սակայն ազատ առևտրի համաձայնագրի կնքմամբ հետաքրքրված են բազմաթիվ երկրներ, որով պետությունները ձգտում են ստանալ արտոնյալ մուտքի հնարավորություն առևտրային գործընկերոջ ներքին շուկայում և մեծացնել տնտեսական օգուտները:

Շուկաների, ներդրումային հնարավորությունների արդյունավետ զարգացման և տարածաշրջանային արժեշղթաների ձևավորման նպատակով առևտրատնտեսական գործընկերությունն ավելի ընդլայնելու նպատակով ԵԱՏՄ-ն, այդ թվում Հայաստանը, դիտարկում է երրորդ երկրների հետ փոխադարձ համագործակցության հեռանկարները: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալներով՝ այսօր ԵԱՏՄ-ի և այլ երկրների միջև առևտրային համագործակցության շուրջ քառասուն առաջարկ կա:

Այս պայմաններում ՀՀ ԵԱՏՄ անդամակցության համատեքստում տնտեսության բացության խնդիրները նոր մարտահրավեր են երկրի ընդհանուր տնտեսական զարգացման համար: Մաքսատուրքերի չկիրառումը, ոչ սակագնային սահմանափակումների ազատականացումը, ծառայությունների, էլեկտրոնային առևտրի և այլ ոլորտում ընթացող ինտեգրացիոն գործընթացները խմբավորման անդամ երկրների համար մեծ փոփոխություններ են առաջացնում: Տարածաշրջանային ինտեգրացիոն համաձայանգրերում երկրի մասնակցության տնտեսական օգուտների ստացման հարցի ուսումնասիրումը մեծ հետաքրքրություն է առաջացնում:

Վերոգրյալի համատեքստում, այն է ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում ՀՀ բացության մակարդակի որոշման գործում ակնկալվող օգուտների և վնասների համադրումը, հետագա բացության նպատակահարմարության բացահայտումը ունի բավականին կիրառական նշանակություն, ինչն էլ հիմնավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և նորույթը.

• միջազգային տնտեսական ինտեգրման շրջանակներում առևտրի բացությունը գնահատելու համար մշակվել և հաշվարկել է նոր ցուցանիշ՝ փոխադարձ առևտրի քվոտա՝ որպես տարածաշրջանային ինտեգրացիոն միավորման ներսում փոխադարձ ներմուծման և արտահանման գումարի հարաբերակցություն ՀՆԱ-ին:

• GTAP մոդելավորման կիրառմամբ գնահատվել է երրորդ երկրների հետ առևտրի ազատականացման ազդեցությունը ԵԱՏՄ անդամ երկրների, այդ թվում Հայաստանի մակրոտնտեսական զարգացման ցուցանիշների վրա՝ հաշվարկելով ՀՆԱ-ի, թողարկման, արտահանման և ներմուծման ծավալների, ինչպես նաև զբաղվածության ցուցանիշների հնարավոր փոփոխությունը:

• GTAP մոդելում ընդգրկված երկրների հետ առևտրի պայմանների փոփոխման, մասնավորապես առևտրի ազատականացման դեպքում (Պակիստան, Մալազիա, Կորեա) վերհանվել են դեպի ԵԱՏՄ ներմուծման նկատմամբ զգայուն ապրանքները:

• ԵԱՏՄ ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում տնտեսության հետագա բացությանն ուղեկցող առևտրի ազատականացման արդյունքում հաշվարկվել է պոտենցիալ առևտրային գործընկերների հետ ԵԱՏՄ անդամ պետություններում ներմուծման ծավալի հարաբերական փոփոխությունը, որի հիման վրա կազմվել են այդ երկրներից ներմուծման նկատմամբ բարձր զգայունությամբ օժտված ապրանքախմբերի մատրիցաները:

• Գնահատվել է, որ պոտենցիալ առևտրային գործընկեր-երկրների հետ առևտրի ազատականացման դեպքում ակնկալվող արտահանման աճը որոշ ապրանքային խմբերի գծով չի համատասխանում երկրի մասնագիտացմանը, միևնույն ժամանակ այդ երկրների միջև առկա ապրանքաշրջանառության ծավալների վրա գնահատվել է մասնագիտացմանը համապատասխանող ապրանքների արտահանման ներուժը:

• Փոխադարձ առևտրային և ներդրումային հոսքերի միջև գծային կախվածության և ներդրումային էլաստիկության հիման վրա գնահատվել է, որ ԵԱՏՄ ներդրումային հոսքերի և փոխադարձ առևտրի ծավալների միջև առկա է ուժեղ կապվածություն:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը.

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը հիմնավորվում է ստացված արդյունքների կիրառական բնույթով: Վերջիններս կարող են կիրառվել այս կամ այն երկրի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքման նպատակահարմարությունը որոշելիս, նման համաձայնագրերի կնքման արդյունքում տնտեսության զգայուն ոլորտները բացահայտելիս: Մշակված գործիքակազմով կարելի է գնահատել և վերլուծել տնտեսության բացության, արտաքին առևտրի կարգավորման հիմնահարցերը: Կատարված հետազոտությունը կհետաքրքրի նաև այդ հիմնահարցերի վերլուծությամբ զբաղվող տնտեսագետներին, կառավարման մասնագետներին, ինչպես նաևն որպես ուսումնական նյութ կարող է ծառայել գիտագործնական սեմինարների և թեմատիկ դասախոսությունների համար:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 109 աղբյուր, և 3 հավելվածից: Աշխատանքի ծավալը կազմում է 138տպագիր էջ՝ առանց հավելվածների:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության առաջին՝ **«*Տնտեսության բացության մակարդակը և դրա կապը միջազգային տնտեսական ինտեգրման հետ*»** գլխում տնտեսության բացությունը դիտարկվել է որպես միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման կարևոր միտում, քննարկվել է տարածաշրջանային տնտեսական ինտեգրման պայմաններում տնտեսության բացության դերը որպես արդյունավետության ապահովման գործիք: Անդրադարձ է կատարվել բաց տնտեսության ազդեցությանը միջազգային առևտրի արդյունավետության բարձրացման դիտանկյունից:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ տնտեսության բացությունը և արտաքին հատվածի զարգացման հիմնախնդիրները»** գլխում կատարվել է բացությունը բնութագրող ցուցանիշների քանական հետազոտություն: Այս համատեքստում գնահատվել է բաց տնտեսության և արտաքին առևտրի, բաց տնտեսության և օտարերկրյա ներդրումների ներգրավման, ինչպես նաև բաց տնտեսության և արժութաֆինանսական հարաբերությունների զարգացման միջև առկա պատճառահետևանքային կապերը, որոնք հիմնավորվել են ՀՀ տնտեսության օրինակով վերոգրյալ ցուցանիշների քանակական գնահատմամբ:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման կատարելագործման հիմքերը տնտեսության բացության համատեքստում»** գլխում վերհանվել և գնահատվել են ՀՀ ԵԱՏՄ անդամակցության պայմաններում երրորդ երկրների հետ առևտրի հետագա ազատականացման հետևանքները: Հեղինակը իրականացրել է հետևանքների բազմամակարդակ վերլուծություն՝ գնահատելով այդ հետևանքները մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության վրա: Այս գլխում հեղինակը ներկայացրել ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթությունները ԵԱՏՄ անդամակցության համատեքստում:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ***, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր

կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

- Աշխատանքում հեղինակը նշում է, որ ԵԱՏՄ անդամ երկրների միջև առևտրային կապերի ընդլայնումը և փոխգործակցության հետագա ազատականացումը կպահանջի արժութաֆինանսական համագործակցության ընդլյանում: Ցանկալի կլիներ, եթե պոտենցիալ երկրների հետ համագործակցության ներուժը վերլուծելիս անդրադառնար նաև արժութային հիմնախնդրին:
- GTAP մոդելը ներառում է ինչպես արտադրական ճյուղեր, այնպես որոշ ծառայությունների ոլորտներ: Հեղինակը չի հիմնավորում, թե ինչու չի գնահատում ազատականացման էֆֆեկտները ծառայությունների ոլորտում:
- Հետազոտության արդյունքները փաստում են, որ առևտրի ազատականացման դեպքում ակնկալվող արտահանման աճը որոշ ապրանքային խմբերի գծով չի համատասխանում երկրի մասնագիտացմանը: Աշխատանքը ավելի կշահեր, եթե հեղինակը փորձեր ներկայացնել արտահանման հնարավոր աճ-մասնագիտացում շղթան:
- էջ 54-ում ներկայացված Գծապատկեր 2.2-ում (ԵԱՏՄ արտաքին և փոխադարձ առևտուրը 2015-2020 թթ.) առկա են տեխնիկական թերություններ և բացթողումներ, մասնավորապես՝ 1) «ներմուծում ԵԱՏՄ-ից դուրս (արտաքին առևտուր)» ցուցանիշն արտացոլող դեղին գույնով արտացոլված վիճակագրական կորագիծը ներկայացված է որպես «արտահանում ԵԱՏՄ-ից դուրս (արտաքին առևտուր)», 2) գծապատկերում ներկայացված ցուցանիշների ոչ բոլոր վիճակագրական կորագծերն են արտացոլված թվերով, 3) «արտահանում ԵԱՏՄ-ից դուրս (փոխադարձ առևտուր) ցուցանիշն արտացոլված չէ դինամիկա արտացոլող վիճակագրական կորագծով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողություններն էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա: Ս. Սնգրյանի ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ կիրառվել է տնտեսական լավ մշակված գործիքակազմ տնտեսության հետագա բացության մակարդակը որոշելու համար:

Հեղինակը ցուցաբերել է մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին փաստում են ատենախոսությունում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել ԵԱՏՄ հետագա ընդլայնման աշխարհագրությունը որոշելիս՝ հնարավորություն տալով հաշվի առնել անդամ երկրների հնարավոր օգուտները:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները: Ընդհանուր առմամբ, Սիմոն Սնգրյանի «ՀՀ տնտեսության բացության միտումներն ու հիմնախնդիրները միջազգային տնտեսական ինտեգրման պայմաններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ընդդիմախոս՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի գլխավոր մասնագետ,
տ.գ.թ.՝ Հովականյան Նարեկ Յուրիի

19.05.2023 թ.

Նարեկ Հովակնյանի գրությունը հաստատում եմ:
Հաշվեքննիչ պալատի կառավարման բաժնի պետ

ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ
ԱՆՁՆԱԿԱԶՄ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԲԱԺԻՆ